ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

<<19>> **մայիս 2020թ.**

ՀՐԱՄԱՆ N 130

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի թիվ 814-Ն որոշմամբ սահմանված «Ծառայողական քննություն անցկացնելու կարգի» 7-րդ, 8-րդ և 12-րդ կետերի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ազատ Հովսեփյանի կողմից ծառայողական պարտականությունները անհարգելի պատճառով ոչ պատշաճ կատարելու՝ քաղաքացուն մարզպետի 30.03.2020թ. թիվ 01/07.3/1997-2020 պաշտոնական գրությամբ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելու դեպքով 2020 թվականի մայիսի 20-ից նշանակել ծառայողական քննություն:
2. Ծառայողական քննության պարզաբանման ենթակա հարցերն են.
1) Եղեգնաձոր քաղաքի բնակչուհի Հեղինե Հակոբյանի դիմումին ի պատասխան գրության տեղեկությունների համապատասխանությունը իրականությանը,
2) Ազատ Հովսեփյանի կողմից գրությունը առանց համապատասխան ուսումնասիրություն և քննարկում կատարելու պատրաստելը,
3) Ազատ Հովսեփյանի արարքում պաշտոնական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հիմքերի առկայությունը:
3. Ծառայողական քննության վարող նշանակել մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանին:
4. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ և պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

Invalid signature

X

ԿԱՄՈ ՍԱՀԱԿՅԱՆ

Signed by: SAHAKYAN KAMO 2108590021

Կ. ՍԱՀԱԿՅԱՆ